



Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի  
օգնականների դասավանդման հմտությունների զարգացման  
ապահովում» ծրագիր

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Դաշտավանի Գ. Տոնոյանի անվան միջն. դպրոց

Առարկա՝ Տեխնոլոգիա

Թեմա՝ Սովորողների մեջ ինքնուրույնության,  
նախաձեռնության և ստեղծագործական  
ունակությունների զարգացումը «Տեխնոլոգիա»  
առարկայի «Աստղնագործություն» թեմայի  
դասավանդման ընթացքում

Վերապատրաստող, մենթոր՝ Նունե Ասրյան

Ուսուցիչ՝ Անգին Բաբայան

Երևան 2023

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
ԳԼՈՒԽ 1. Ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացման ուղիները տեխնոլոգիայի դասերին.....	5
ԳԼՈՒԽ 2. <input type="checkbox"/> Ասեղնագործություն <input type="checkbox"/> թեմայի նշանակությունն ու դերը տեխնոլոգիա առարկայի մեջ: Ընդհանուր տեղեկություններ ասեղնագործությունից .....	8
2.1 Նպատակն ու խնդիրները.....	8
2.2 Մեթոդական ցուցումներ.....	8
2.3 Միջառարկայական կապը.....	9
2.4 Վերջնարդյունքը.....	9
2.5 Ծանոթացում ասեղնագործության պատմությանը, նյութերին, գործիքներին ու հարմարանքներին.....	10
Ջետագոտական մաս .....	16
Եզրակացություն.....	21
Գրականություն.....	22

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համաձայն Հանարակրթության նոր չափորոշիչի 'Տեխնոլոգիա' առարկան պատկանում է ԲՏՃՄ ոլորտին, այն նպատակաուղղված է սովորողների մոտ տարրական աշխատանքային հմտությունների ձևավորմանը, գիտության նվաճումների, բնության, մարդու և հասարակության վրա տեխնիկայի և տեխնոլոգիաների կիրառության հավանական ազդեցության և ձեռնարկատիրության մասին սովորողի գիտելիքների ընդլայնման, իր գործունեությունը պլանավորելու և ժամանակն արդյունավետ տնօրինելու կարողությունների ձևավորմանը: Այս նպատակի իրականացման գործում մեծ է սովորողների մոտ ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծարարության զարգացման դերը:

Այսօր մանկավարժական խնդիրներից մեկը կրթական գործընթացում այնպիսի մեթոդների ներդրումն է, որոնք օգնում են սովորողներին ոչ միայն ձեռք բերել որոշակի գիտելիքներ, հմտություններ և կարողություններ գործունեության որոշակի ոլորտում, այլև զարգացնել իրենց ստեղծագործական ներուժը, ինչի գործում կարևոր դեր է տրվում տեխնոլոգիայի դասերին:

'Տեխնոլոգիա' առարկայի դասերի 70-80%-ը հատկացվում է գործնական աշխատանքներին: Այսպիսով, տեխնոլոգիայի դասերին կատարելով գործնական հանձնարարություններ սովորողների մոտ ձևավորվում են ստեղծագործական գործունեության հմտություններ:

Ինչպես հայտնի է, ստեղծարարությունը մարդկային գործունեություն է, որն ուղղված է գիտության, արվեստի, տեխնոլոգիայի և արտադրության ոլորտում ինչ-որ նոր, օրիգինալ արտադրանքի ստեղծմանը: Ստեղծագործական գործընթացն անկանխատեսելի է, բայց դրան նախորդում է փորձի, գիտելիքի, հմտությունների և կարողությունների երկար կուտակումը:

'Տեխնոլոգիա' առարկայի ուսուցման գործընթացում կարևոր տեղ է հատկացվում նաև 'Ասեղնագործություն' թեմային, որի միջոցով սովորողների մոտ զարգանում է ստեղծագործական ունակությունները: Նրանք դառնում են ինքնուրույն ու նախաձեռող:

Հետագոտական աշխատանքի համար ընտրել եմ այս թեման, քանի որ սիրում եմ ստեղծագործել և ինձ համար շատ կարևոր է մեր ազգային արժեքների պահպանումն ու սերնդե-սերունդ դրա փոխանցումը:

Չետագոտության նպատակն է՝

- ուսումնասիրել ասեղնագործության և ասեղնագործության տեխնիկայի պատմությունը, ցույց տալ ասեղնագործության բազմազան ու հետաքրքիր աշխարհը՝ որպես արվեստի և արհեստի տեսակներից մեկը
- նախաձեռնողականության, ինքնուրույնության և ստեղծագործական ունակությունների բացահայտում,

Թեման շատ արդիական է, քանի որ

- աշակերտները կկողմնորոշվեն սիրելի մասնագիտության մեջ,
- ձեռք կբերեն հաճելի ու օգտակարը համատեղելու կարողություն,
- ժողովրդական արհեստների միջոցով կստեղծեն գեղարվեստական իրեր, որոնք կօգտագործեն առօրյայում:

**ԳԼՈՒԽ 1.**            Ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացման ուղիները տեխնոլոգիայի դասերին

Ինքնուրույնությունն այսօրվա իրականության անբաժանելի պահանջն է, որը ենթադրում է սովորողների մոտ այնպիսի հատկությունների ձևավորումը, ինչպիսիք են նպատակասլացությունը, հայացքների և մտածողության լայնությունը, մտքի և գործողությունների ճկունությունը, ձեռներեցությունն ու քննադատական վերաբերմունքը կյանքում տեղի ունեցող իրավիճակների և երևույթների նկատմամբ: Ինքնուրույն աշխատանքն այն աշխատանքն է, որն իրականացվում է առանց ուսուցչի անուղղակի մասնակցության, բայց նրա ցուցումով՝ հատուկ դրա համար նախատեսված ժամանակում:

Ինքնուրույն աշխատանքը դպրոցականների կրթական գործունեության ակտիվացման միջոց է և պատկանում է դպրոցականների կրթական գործունեության ակտիվացման հանրաճանաչ միջոցներին՝ գիտելիքների և հմտությունների յուրացման

գործում: Ցավոք, չկա համակարծիք տեսակետ, թե ինչ է ներառված «ինքնուրույն աշխատանք» հասկացության մեջ, և դա խանգարում է դասավանդման պրակտիկայի զարգացմանը [2]: Եթե ուսուցիչը չգիտի, թե սովորողների որ աշխատանքն ինքնուրույն չի լինի, ապա անհնար է խոսել դպրոցականների ինքնուրույնության զարգացման մասին՝ տեխնոլոգիայի դասերին: Մենք ինքնուրույն աշխատանքը հասկանում ենք որպես դպրոցականների կրթական և աշխատանքային գործունեության կազմակերպման ձև: Սովորողների ինքնուրույնության զարգացման հիմնական խնդիրն այն է, որ «Տեխնոլոգիա» առարկայի դասընթացի շրջանակներում անհրաժեշտ է դպրոցականների մոտ ձևավորել ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու, դրանք գնահատելու և գործնականում կիրառելու կարողություն:

Տիրապետել գիտելիքին նշանակում է ոչ միայն հասկանալ և հիշել, այլ նաև կարողանալ կիրառել այն տարբեր խնդիրներ լուծելու համար, կարողանալ գիտելիքներն ու գործունեության ձևը փոխանցել նոր իրավիճակի: Նման արդյունքի հասնելու հիմնական միջոցը ուսանողի ինքնուրույն աշխատանքն է: Ընդ որում, պետք է նշել, որ հիմնական ուշադրությունը պետք է կենտրոնացնել հիմնարար գիտելիքների ձևավորման վրա, այն հասցնելով վարպետության մակարդակի, իսկ դա հնարավոր է միայն ինքնուրույն աշխատանքի ընթացքում: Սովորողը պետք է կարողանա տարբերել հիմնարար, կամ կարևոր գիտելիքը օժանդակից:

Այսպիսով, դպրոցականների մոտ ինքնուրույն աշխատանքի հմտությունների զարգացման գործընթացում կարելի է առանձնացնել երեք փուլ.

- առանձին անհատական աշխատանքային գործողություններ կատարելու տեխնիկայի մշակում և գրաֆիկական գրագիտության տարրերի յուրացում:
- ցանկացած առաջադրանքի կատարման միասնական մոտեցման ձևավորում և գործողությունների հաջորդականության յուրացում՝ հիմնված վերլուծության և ինքնավերահսկման վրա:
- գիտելիքը նոր իրավիճակ փոխանցելու ունակության ձևավորում՝ վերլուծության, ինքնատիրապետման և պլանավորման հիման վրա:

Ինքնուրույնությունը բնութագրվում է հետևյալ հատկանիշներով.

- գիտելիքի պահանջով, ինքնուրույն մտածելու (դատելու) կարողությամբ,
- նոր իրավիճակներում կողմնորոշվելու ունակությամբ,

– նոր խնդրին իր սեփական մոտեցումով գտնելու ձգտումով, գիտելիքի  
նկատմամբ քննադատական մոտեցմամբ:

Ինքնուրույն աշխատանքը պետք է լինի նպատակային: Դրա համար հարկավոր է աշխատանքի նպատակի հստակ ձևակերպում: Ուսուցչի խնդիրն է գտնել առաջադրանքի այնպիսի ձևակերպում, որը սովորողների մոտ կառաջացնի հետաքրքրությունն աշխատանքի նկատմամբ և այն հնարավորինս լավ կատարելու ցանկություն: Սովորողները պետք է հստակ իմանան, թե որն է առաջադրանքը և ինչպես է այն ստուգվելու: Սա սովորողների աշխատանքին տալիս է բովանդակալից, նպատակային բնույթ և նպաստում դրա առավել հաջող իրականացմանը: Այս պահանջի թերագնահատումը հանգեցնում է նրան, որ սովորողները, չհասկանալով աշխատանքի նպատակը, չեն անում այն, ինչ անհրաժեշտ է, կամ ստիպված են լինում բազմիցս դիմել ուսուցչին պարզաբանումների համար դրա իրականացման գործընթացում: Այս ամենը հանգեցնում է ժամանակի ոչ արդյունավետ կազմակերպմանը և աշխատանքում սովորողի ինքնուրույնության նվազմանը: Միաժամանակ հարկավոր է, որ ուսուցչի տված հանձնարարությունները մատչելի լինեն աշակերտներին ինքնուրույն կատարելու համար, իսկ նրանց գիտելիքները բավարարեն պահանջներին:

Սկզբում հարկավոր է սովորողների մոտ ձևավորել ինքնուրույն աշխատանքի ամենապարզ հմտությունները (Եսթիզների և գծագրերի կատարում, պարզ փոփոխություններ, պարզ խնդիրների լուծում և այլն): Այս դեպքում սովորողների կողմից առաջադրանքների կատարմանը պետք է նախորդի ուսուցչի կողմից աշխատանքի ակնառու ցուցադրությունը՝ ուղեկցվող հստակ բացատրություններով, տարբեր դիդակտիկ նյութերի օգնությամբ և գրատախտակին արվող նշումներով, ինչպես նաև սահիկների և տեսանյութերի միջոցով:

Ուսուցչի կողմից աշխատանքի մեթոդները ցուցադրելուց հետո սովորողների կատարած ինքնուրույն աշխատանքը կրում է կրկնօրինակման բնույթ: Այն չի զարգացնում անձի ինքնուրույնությունը, բայց մեծ նշանակություն ունի ավելի բարդ հմտությունների և կարողությունների ձևավորման, ինքնուրույնության ավելի բարձր ձևի համար, որտեղ սովորողները կարող են մշակել և կիրառել իրենց սեփական մեթոդները առաջադրված խնդիրների լուծման համար (օրինակ՝ մշակել տեխնոլոգիական քարտ, գծել Եսթիզ և այլն):

Ժամանակակից պայմաններում ուսուցչի աշխատանքի արդյունավետությունը նաև որոշվում է նրանով, թե որքանով է իր ուսումնադաստիարակչական գործընթացն

ապահովում աշակերտների մոտ ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը: Դա պայմանավորված է նրանով, որ 21-րդ դարի հմտություններից շատերը հիմնված են սովորողների ստեղծագործական ունակությունների վրա: Դրանք սովորողների մոտ կարող են ձևավորել մի շարք գործոնների ազդեցության տակ: Փորձը ցույց է տալիս, որ դրան մեծապես նպաստում է ուսուցման գործընթացում ուսուցչի ճիշտ մոտեցումը և նրա կողմից աշակերտների համար ճիշտ առաջադրանքներ կազմելը:

Ինչպես հայտնի է, ստեղծարարությունը մարդկային գործունեություն է, որն ուղղված է գիտության, արվեստի, տեխնոլոգիայի և արտադրության ոլորտում ինչ-որ նոր, օրիգինալ արտադրանքի ստեղծմանը: Ստեղծագործական գործընթացն անկանխատեսելի է, բայց դրան նախորդում է փորձի, գիտելիքի, հմտությունների և կարողությունների երկար կուտակումը:

Առանձնապես կարևոր է «Տեխնոլոգիա» առարկայի դերն այդ հարցում, քանի որ այն ձևավորում է աշխատանքային հմտություններ և անմիջականորեն կապված է ստեղծարարության հետ: Ստեղծագործական պոտենցիալի զարգացման համար հարկավոր է աշակերտներին հավատ ներշնչել սեփական ուժերի նկատմամբ, որպեսզի նրանք վստահ լինեն, որ ունակ են լուծելու ստեղծագործական խնդիրներ: Ինքնավստահությունը և սեփական ուժերի նկատմամբ հավատը զգալիորեն խթանում է սովորողների մոտիվացիան՝ կատարելու ստեղծագործական առաջադրանքներ: Իսկ այդ առաջադրանքների կատարման համար, սովորողները պետք է լինեն նախաձեռնող:

**ԳԼՈՒԽ 2.** «Ասեղնագործություն» թեմայի նշանակությունն ու դերը «Տեխնոլոգիա» առարկայի մեջ: Ընդհանուր տեղեկություններ ասեղնագործությունից

## 2.1 Նպատակն ու խնդիրները

- խթանել հետաքրքրասիրությունը ասեղնագործ իրերի նկատմամբ,
- հաղորդել գիտելիքներ ասեղնագործության տեսակների մասին,
- ծանոթացնել ասեղնագործության համար կիրառվող գործիքներին ու հարմարանքներին,
- ծանոթացնել զարդանախշերի տեսակներին,
- ծանոթացնել զարդակարերի տեսակներին,

- սովորեցնել զարդակարերի տեսակները,
- զարգացնել Եսքիզի մշակման և նրանից ճիշտ օգտվելու ունակությունները,
- սովորեցնել զարդանախշերը գործվածքի վրա փոխադրելու տեխնիկան,
- ձևավորել ասեղնագործելու կարողություն,
- զարգացնել տարածական պատկերացումները,
- ընդլայնել պատկերացումները ասեղնագործության մասին,
- դաստիարակել հոգատար, ուշադիր և կոկիկ վերաբերմունք կատարած աշխատանքի նկատմամբ,
- պահպանել անվտանգության կանոնները,
- ձևավորել անհատական և խմբերով աշխատելու կարողունակություններ,
- սովորեցնել զարգացնել սեփական մշակութային ու գեղագիտական պատկերացումները՝ ձևավորելով գեղագիտական ճաշակ:

## 2.2 Մեթոդական ցուցումներ

Երեխաներին պետք է նախապես հանձնարարել բերել ասեղնագործ իրեր: Դասը սկսել հարցադրումով. «Ինչ գիտեք ասեղնագործության մասին»: Ստանալով տարբեր պատասխաններ, ընդհանրացնել՝ ցուցադրելով ասեղնագործ իրերը: Երեխաների ուշադրությանը հրավիրել ասեղնագործ իրերի նշանակությանը, դրանցում տեղ գտած զարդանախշերի, զարդակարերի, օգտագործված թելերի տեսակների, գույների վրա: Չրուցել զարդանախշերի ընտրության, Եսքիզի մշակման, գործվածքի վրա արտատպման մասին: Բացատրել և ցուցադրել զարդակարերի տեխնիկան, ներկայացնել հայկական ասեղնագործության տեսակներից՝ Այնթափը/թելքաշը/, Մարաշի դեկորատիվ խաչկարը, Վասպուրականի ժանյակը: Ծանոթացնել ասեղնագործելու համար կիրառվող աշխատանքային միջոցներին՝ ասեղներին, քարգահին, թելերի և գործվածքների տեսակներին:

Ցանկալի է և ճիշտ թեման սկսել աշխատատեղի կազմակերպումից, աշխատանքի պլանավորումից, գործվածքի, Եսքիզի, թելերի, զարդակարերի ընտրությունից, որպեսի ավելի համակարգված և թեթև անցնի դասապրոցեսը: Տեսական նյութը սովորելուց հետո, աշակերտները պետք է կարողանան ինքնուրույն մշակել Եսքիզներ, փոխանցել դրանք գործվածքի վրա և ասեղնագործեն պարզ կարատեսակներով, որից հետո աստիճանաբար անցում կատարեն ավելի բարդ կարատեսակների:

Ցանկալի է ընտրել թեմատիկա ասեղնագործության համար, որը նույնպես կլինի



ուսուցանող և այնպիսի աշխատանք ընտրել, որը հետագայում կիրառելի կլինի աշակերտների համար և կոգևորի աշխատելու ընթացքում: Թեմայի դասավանդման ընթացքում իրականացնել հայտորոշիչ գնահատում հայտորոշիչ թեստեր, առաջադրանքներ:

### 2.3 Միջառարկայական կապը

- Հայոց լեզու: Տիրապետելով լեզվին՝ կարդա և հասկանա կարդացածը:
- Մաթեմատիկա: Կարողանա կատարել թվաբանական գործողություններ:
- Նկարչություն: Այս կապերը սեր են որմանկարչության ու մանրանկարչության հետ, ուր մեծ դեր են խաղում գունային նմանությունները, նկարների բովանդակությունը:
- Գրաֆիկա: Կարողանա կատարել էսքիզներ, որպեսզի դրանք փոխանցի գործվածքին:

### 2.4 Ակնկալվող արդյունքները

Թեման ուսումնասիրելուց հետո սովորողը պետք է՝

- իմանա ասեղնագործության տեսակների, կիրառվող գործիքների և հարմարանքների, զարդակարերի, զարդանախշերի տեսակների մասին, զարդանախշերը գործվածքի վրա փոխանցելու տեխնիկան
- կարողանա անել զարդանախշեր, զարդակարեր, գործվածքի վրա փոխադրել, ասեղնագործել, պահպանել անվտանգության կանոնները
- կարևորի սովորելը և ցուցաբերի հետաքրքրություն սովորելու նկատմամբ
- դրսևորի տրամաբանական և ստեղծագործական մտածողություն, կարողանա անդրադառնալ ու արձագանքել սեփական և ուրիշների ստեղծած աշխատանքին
- ցուցաբերի իր գործունեությունը պլանավորելու և ժամանակն արդյունավետ տնօրինելու կարողություններ
- ծանոթ լինի ստեղծագործական տարբեր ժանրերի և ոճերի, արվեստի միջոցով ստեղծագործաբար արտահայտի իր գաղափարները և հույզերը
- դրսևորի մշակութային ընկալման և արժևորման կարողություններ, արվեստի որոշ տեսակներում ստեղծագործական աշխատանքներ կատարելու ունակություններ և հմտություններ

- կճանաչի հայ մշակույթն ու մարդկային քաղաքակրթությունների մշակութային բաղադրիչները՝ որպես մարդկային զգացմունքների և գործողությունների կողմնորոշիչներ:

## 2.5 Ծանոթացում ասեղնագործության պատմությանը, նյութերին, գործիքներին ու հարմարանքներին

Ասեղնագործական արվեստը բազմադարյան պատմություն ունի: Այն դեկորատիվ-կիրառական արվեստի հնագույն, բայց կենսունակ բնագավառներից է, ավեստի ամենամասսայական ձևերից՝ իր տարածմամբ, դերով և նշանակությամբ:

Հին աշխարհում մարդիկ ասեղի փոխարեն օգտագործել են բույսերի փշեր և ձկների ոսկորներ, այնուհետև՝ փայտ, փղոսկր, մետաղից պատրաստված ասեղներ: Պատմական վաղ ժամանակից սկսել են գործել ոսկյա թելերով, ապա բրոյա, ավելի ուշ՝ վուշի և բամբակյա թելերով: Ասեղնագործության մեջ բրոյա թել օգտագործվել է Չինաստանում մ.թ. 1200 տարի առաջ:

Հին աշխարհում ասեղնագործությամբ զբաղվել են ասերոստանցիները, հրեաները, պարսիկները, հույները, հռոմեացիները, իսկ ասեղնագործության առավել հայտնի կենտրոնը եղել է Բաբելոնը: Մինչև XII դար գլխավորապես ասեղնագործում էին հաստ թելերով, պարզունակ պատկերներով և միապաղաղ գույներով: Բազմագույն ասեղնագործությունն ի հայտ եկավ XIII-XIV դդ. Գերմանիանում և Անգլիայում, իսկ XV-XVI դդ. վենետիկյան ժանյակում այն հասավ բարձրագույն կատարելության:

Հայերը վաղ ժամանակներից ծանոթ են եղել և՛ հասարակ, և՛ բարդ ասեղնակարերի հետ: Շնորհիվ ասեղ-թելի, ասեղնակարերի, զարդանկարների գործվածքը դառնում է զարդարանք: Դարերի ընթացքում ժողովրդական շնորհալի ստեղծագործողների ու տաղանդավոր վարպետների ձեռքով ասեղնագործված բազմատեսակ ու բազմաբովանդակ նմուշները հասել են մեզ: Կապված լինելով ժողովրդի պատմության հետ, ասեղնագործ արվեստը լայնորեն տարածված էր մայր հայրենիքում և գաղթօջախներում: Այն բազմիցս հասել է կորստյան շեմին և նորից կենդանացել, զարգացել և հասել մեզ, պահպանելով իր առանձնահատկությունները՝ հարուստ զարդանկարը խաղացկուն գույները, ստեղծագործական ինքնատիպությունը: Ազգային միասնական ուժի պահպանման, տարբեր ասեղնակարերի, դրանց տարատեսակների կատարման հետ գոյություն են ունեցել նաև տարբեր վայրերի, տարբեր քաղաքների

միայն իրենց հատուկ ասեղնակարեր, առանձնահատուկ զարդանկարներ: Օրինակ՝ Վանա կար, Տարսուհի կար, Քիլիսի կար, Երզրնկայի կար, Մարաշի կար և այլն:

Հայկական ասեղնագործությունը հիմնականում զարգացել է երեք խոշոր ճյուղերով՝

- ժողովրդավարական՝ կապված գեղջկական տարզի և կենցաղի հետ
- քաղաքային՝ առևտրա-արհեստավորական
- եկեղեցական:



## Ասեղնագործության համար անհրաժեշտ գործիքների ու հարմարանքներ

Ձեռքով ասեղնագործելու համար անհրաժեշտ են գործիքներ և նյութեր՝ թելեր, ասեղներ, թելիչ, քարգահ, մատնոց, մատիտներ, մկրատ, սանտիմետր ժապավեն:

- Թելերը տարբերվում են որակով, կառուցվածքով, հաստությամբ և գույնով: Ավելի հաճախ կիրառվում են հատուկ՝ «Մուլինե» թելերը: Կարելի է օգտագործել նաև բրոյա մանվածքաթելեր, գործվածքներից հանված թելեր, մետաքսաթելեր, որոնք պետք է լինեն փափուկ, փայլուն և ոչ շատ ոլորված: Որպեսզի մուլինե թելի գույնը չթափի, օգտագործելուց առաջ այն հինգ րոպե պետք է թողնել թույլ քացախաջրում՝ մեկ բաժակ ջրին մեկ ճաշի գդալ քացախ: Խոշոր աշխատանքների համար հաճախ օգտագործվում են շտապելային և սինթետիկ թելեր:
- Ասեղները լինում են կարճ և երկարացված, սակայն լայն անցքով (N1-12): Թելի երկարությունը վերցնում են սովորաբար 50-60 սմ: Խիտ և բարակ գործվածքների վրա

ասեղնագործելու համար օգտագործվում են ավելի բարակ ասեղներ՝ ավելի փոքր աչքերով:

- Թելիչը օգնում է թելն ասեղի անցքով հեշտությամբ անցկացնել, այսինքն թելելու համար է:
- Քարգահը(օղակը) ասեղնագործության շրջանակ է, որի միջոցով գործվածքը պահվում է ձգված վիճակում և չի դեֆորմացվում: Այն կարող է լինել ուղղանկյուն կամ կլոր, փայտյա կամ պլաստմասսե: Դրանք բաղկացած են երկու օղակներից, որոնց տրամագիծը 20-40 սմ է և տեղափոխվում են մեկը մյուսի մեջ:
- Մատնոցը դրվում է աջ ձեռքի միջնամատին: Այն պաշտպանում է մատը ծակծկոցներից: Մատնոցը պետք է ընտրվի մատի չափին համապատասխան:
- Մատիտները պետք է լինեն լավ սրված: Փափուկ մատիտով թղթի կամ մոմաթղթի վրա կատարում են եսքիզը, իսկ կոշտ մատիտով նկարը փոխանցում են գործվածքին:
- Մկրատները լինում են տարբեր չափերի, սուր ծայրերով և շեղբերի ծայրերը պետք է ամբողջությամբ փակվեն: Մեծ մկրատը օգտագործվում է գործվածքը ձևելու, միջինը թելերը կտրելու և վերամշակման համար, փոքրը՝ թեք ծայրերով ասեղնագործության նուրբ աշխատանքների համար:
- Սանտիմետր ժապավենը օգտագործվում է արտադրանքի ճշգրիտ չափը որոշելու համար, նախշի հիմնական գծերի տեղը գտնելու համար և այլն:



### Ասեղնագործության աշխատանքի քայլաշար

1. Ընտրել եսքիզը (նկարը) և համապատասխան գործվածքը:
2. Փոխանցել նկարները գործվածքի վրա
3. Մատիտով կամ գրչով հստակեցնել ուրվագիծերը
4. Գործվածքը հագցնել օղակի վրա և ձգել այն

5. Նախապատրաստել համապատասճան գույնի թելեր, ասեղներ, տարբեր չափերի մկրատներ, գնդասեղներ

6. Սկսել ասեղնադործության աշխատանքը՝ ամրացնելով թելի ծայրը

7. Պահպանել անվտանգության կանոնները

### Անվտանգության կանոններ

- չի կարելի օգտագործել ժանգոտ ասեղներ, դրանք կարող են հետք թողնել գործվածքի վրա
- ասեղները և գնդասեղները պետք է հաշվել աշխատանքից առաջ և հետո
- գնդասեղները պետք է այնպես խրել գործվածքի մեջ, որպեսզի սուր ծայրը մնա գործվածքի շերտերի արանքում
- մկրատներն անհրաժեշտ է սեղանին դնել փակ վիճակում, աշխատող ձեռքի մոտ
- մատնոցը անհրաժեշտ է հազցնել աշխատող ձեռքի միջնամատին
- թելը չի կարելի կտրել ատամներով
- թելի երկարությունը չպետք է անցնի 40 սմ-ից, իսկ բրոյա թելի դեպքում 50-ից:

### Եսքիզի փոխանցումը գործվածքի վրա

Ասեղնագործելուց առաջ պետք է ընտրել գործվածքը, նախշը և Եսքիզը փոխանցել գործվածքի վրա: Չարդանախշերը փոխադրում են գործվածքի վրա յուղաթերթի կամ պատճենաթղթի միջոցով:

Ժամանակակից արտադրությունը պահանջում է տարբեր տեսակի նոր Եսքիզներ: Դրանց փոխանցումը գործվածքի վրա կատարվում է արդուկի միջոցով:

Եսքիզը փոխանցելուց հետո կտավը տեղադրում ենք փոքր շրջանակի մեջ և մեծ շրջանակը վերևից ամրացնում ենք:

Մուկինե թելը մասնատում ենք մի քանի մասերի և թելիչի միջոցով թելում ենք համապատասխան համարի ասեղը: Թելի գույները ընտրում ենք համապատասխան նկարի:

Ասեղնագործելիս երբեք հանգույցներ չենք անում: Եթե աշխատանքը կատարում ենք զույգ թելերով, օրինակ երկու, ապա պետք է վերցնել մեկ թել և դրա երկու ծայրերն էլ անցկացնել ասեղի ծայրով: Այդ դեպքում թելի մյուս ծայրին առաջանում է օղակ: Առաջին կուլը անելուց հետո այդ օղակի միջով պետք է անցկացնել ասեղը: Եվ

երկրորդ տարբերակը, եթե օգտագործվող թելերի քանակը կենտ է, ապա կարելի է անել մի քանի փոքր կուլթեր գործվածքի այն մասում, որը հետո պետք է ծածկվի բանվածքով:

## Չարդակարերի ընտրություն: Թելքաշ

Ասեղնագործությունը ասեղով կամ ասեղնագործող մեքենայով զանազան գործվածքների, կաշվի, թաղիքի վրա տարբեր կարերով ստեղծում են պատկեր, գործվածք և այլ նյութեր զարդարելու արհեստ՝ ասեղ, թելի և մանվածքի կիրառությամբ:

Չարդակարեր: Չարդակարերը անցել են երկար պատմական ճանապարհ՝ սկսած ասեղնագործության ծագման պատմությունից, մինչև ժամանակակից ավտոմատ մեքենայական կարերը: Ձեռքի ասեղնագործության բոլոր զարդակարերը կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խումբը՝ համրովի զարդակարերն են, այսինքն այն կարատեսակները, որոնք կատարվում են գործվածքի թելերի խիստ համրանքով: Երկրորդ խմբի մեջ մտնում են ազատ զարդակարերը, որոնք կատարվում են նախօրոք կատարված ուրվանկարի վրա առանց հաշվելու: Ասեղնագործությունը սովորաբար սկսվում է պարզ կարատեսակներից՝ ցողունակար, շղթայակար, եղևնակար, օղակակար:

Չարդակարերի տեսակներից մի քանիսը ներկայացնում են ստորև.

- 1) Խաչկարի տեսակները մի քանիսն են՝ ավանդական, անգլիական և այլն:
- 2) Պատկար կարածևով ասեղնագործում են թելքաշ սյունիկները, տերևները, ծաղիկները:
- 3) Հարթակարով կատարած ամբողջ զարդանկարը լցվում է թելերով: Այդ պատճառով էլ կոչվում է լիցք:
- 4) Ճյուղակարի միջոցով գործում են ճյուղերն ու ցողունները
- 5) Օղակարը կատարվում է ճախից աջ ուղղությամբ. ասեղը դրսի կողմից մտնում է կտորի մեջ այնպես, որ գործող թելը միշտ մնա ասեղի տակ ու օղակ կազմի

6) Շարակարը կատարում են ասեղն առաջ, աջից ձախ՝ վերցնելով և բաց թողնելով հավասար քանակությամբ կուլթեր:



### Ասեղնագործ իրերի որակի ստուգում: Խոնավաջերմային մշակում

Ասեղնագործությունը պահանջում է մեծ աշխատասիրություն, համբերատարություն և կոկիկություն: Ասեղնագործության վերջում երևում է, թե տվյալ անձը որքանով է համբերատար և կոկիկ աշխատել: Ավարտելուց հետո, ստուգում ենք աշխատանքը, կտրում ավելորդ թելերը, հետո ենթարկում ենք խոնավաջերմային մշակման՝ լվանալ առանձին, գոլ օճառաջրում, սկզբում ցայելով գոլ, այնուհետև սառը ջրում: Չորացնել փափուկ սրբիչի մեջ, խոնավ վիճակում արդուկել հակառակ կողմից, վերջնական չորացնել հարթ մակերեսի վրա: Լվանալուց չի կարելի օգտագործել սպիտակեցնող կամ այլ քիմիական նյութեր, որպեսզի չգունաթափի:

### Ջետագոտական մաս

Ուսումնասիրելով ասեղնագործության և ասեղնագործության տեխնիկայի պատմությունը, աշակերտներին ցույց տալով ասեղնագործության բազմազան ու հետաքրքիր աշխարհը՝ արվեստի և արհեստի տեսանկյունից, հասկացա, որ այն ժողովրդական արվեստի ամենատարածված տեսակներից է: Այս դժվար, բայց և հաճելի աշխատանքը եղել է հայ կնոջ ուղեկիցը կյանքում: Նախկինում աղջիկները վաղ մանկուց սովորում էին ասեղնագործել: Եվ այս սկզբունքը ավանդական էր թե՛ աղքատ, թե՛ հարուստ ընտանիքներում: Օժիտի համար նաղատեսված հարսանեկան հանդերձանքի, երեկոյան հագուստի, անկողնային և խոհանոցային սպիտակեղենների, սրբիչների վրա առկա էին ասեղնագործություններ: Նման աշխատանքը

համարվում էր ամենահարմարը կնոջ համար:

Յետագոտությունը անց է կացվել Դաշտավանի Գ. Տոնոյանի անվան միջնակարգ դպրոցի երկու 6-րդ դասարաններում:

Յետագոտության ժամանակ, երեխաների շրջանում հարցում կատարելով՝ հասկացա, որ կան ընտանիքներ, որտեղ տատիկները և մայրիկները զբաղվում են ասեղնագործությամբ: Նրանք իրենց իմացածը փոխանցում են սերունդներին: Կան երեխաներ, ովքեր բերում և ներկայացնում են իրենց տատիկի կամ մայրիկի աշխատանքը: Այդ աշխատանքները հիմնականում սփռոցի, բարձի երեսի կամ էլ թաշկինակների տեսքով են:

‘Ասեղնագործություն’ թեման ուսումնասիրելու ժամանակ աշակերտները ցուցաբերեցին մեծ հետաքրքրություն ասեղնագործության պատմության, ասեղնագործ իրերի և դրա կատարման տեխնիկայի վերաբերյալ: Հասկացա, որ դա օգնում է զարգացնել նրանց ստեղծագործական ուակությունները, նրանք դառնում են ինքնուրույն և նախաձեռնող: Ձևավորվում է նաև նրանց գեղագիտական ճաշակը և հետագայում նրանք իրենց ձեռքերով կարող են ստեղծել իրեր, որոնք կօգտագործեն առօրյայում:

Ստորև ներկայացնում եմ ‘ասեղնագործություն’ թեմայի դասերից մեկը:

## **Օրվա դասի պլանավորում**

**Առարկա** \_ «Տեխնոլոգիա»

**Ուսուցիչ** \_ Անգին Բաբայան

**Դասարան** \_ 6\_րդ

**Թեմա** \_ Ասեղնագործություն: Չարդակարերի ընտրություն: Թելքաշ

**Տևողությունը** \_ 45 րոպե

**Ուսուցման մեթոդները** - խոսքային՝ տեղեկությունների հայտնում, ցուցադրում՝ ասեղնագործ իրեր, ցուցումներ, հրահանգներ, խնդիր-հետազոտություն, ինքնուրույն գործնական աշխատանք

**Ուսուցման միջոցները** - Դասագիրք, պատկերազարդ գրքեր, զարդանախշերի էքրիզներ

**Ուսուցման պարագաները** - Գործվածքներ, ասեղնագործելու թելեր, ասեղներ,



մկրատ, մատնոց, պատճենանահանման թուղթ, մատիտ, գունազարդման համար նախատեսված նկարներ, զարդանախշի էսքիզներ, քարգահ

**Դիդակտիկ պարագաներ** - Ասեղնագործ իրեր

**Եզրույթները, հասկացությունները** - զարդակարեր, զարդանախշեր, գործվածքի վրա փոխադրել, զարդանախշի արտատպում, ասեղի և թելի ընտրություն, ուրվագիծ, եզրակար

**Միջառարկայական կապը** - «Կերպարվեստ», «Գրաֆիկա», «Բնագիտություն»

**Յիշել** - Եթե դասարանում կան կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ, ապա նրանք պետք է մշտապես լինեն ուշադրության կենտրոնում: Առաջարկել կատարել պարզ զարդակարեր և ասեղնագործել պարզ էսքիզներ: Ասեղով աշխատելու ընթացքում պետք է լինեն ուսուցչի ուշադրության կենտրոնում:

**Դասի նպատակը`**

**Ակադեմիական`**

- հաղորդել տեղեկություններ գործվածքների տեսակներ, թելերի տեսակների, էսքիզների մասի
- ծանոթացնել զարդակարերի և զարդանախշերի տեսակներին սովորեցնել զարդակարերը գործվածքի վրա փոխադրելու տեխնիկան

**Սոցիալական`**

- ձևավորել ասեղնագործելու կարողություններ,
- զարգացնել տարածական պատկերացումները,
- դաստիարակել հոգատար, ուշադիր և կոկիկ վերաբերմունք կատարած աշխատանքի նկատմամբ

**Արժեքային համակարգը** \_ արժեքորի գործնական ինքնուրույն աշխատանքների ժամանակ ձեռք բերված գիտելիքները, մարդկային արժանապատվությունը և մարդու իրավունքները

**Վերջնարդյունք`**

իմանա \_ ասեղնագործության տեսակների, կիրառվող գործիքների և հարմարանքների, զարդակարերի, զարդանախշերի տեսակների մասին, զարդանախշերը գործվածքի վրա փոխադրելու տեխնիկան,

կարողանա \_ անել զարդանախշեր, զարդակարեր, գործվածքի վրա փոխադրել, ասեղնագործել, պահպանել աշխատանքի անվտանգության կանոնները:

## **Դասի ընթացքը. `**

1.Խթանման փուլ(5-7 թույն) - ` ստուգել աշակերտների դասին պատրաստ լինելը, նշել բացականերին, դասը սկսել մտազրոհի միջոցով, վեր հանել առկա գիտելիքները ` թեմայի շուրջ հարցադրումով

1.Ի՞նչ գործիքներ են օգտագործվում ասեղնագունդության մեջ:  
2.Ի՞նչ է քարգահը, ինչպես է այն կիրառում:  
3.Ինչպիսի՞ գարդակարերի տեսակներ գիտեք:

2.Իմաստի ընկալում(20-25 թույն) – Ստանալով տարբեր պատասխաններ ցուցադրել ասեղնագործ իրեր և նրանց ուշադրությունը հրավիրել ասեղնագործ իրերի նշանակության, դրանցում տեղ գտած գարդանախշերի, գարդակարերի, թելքաշ ասեղնագունդության, օգտագործված թելերի տեսակների, գույների վրա: Խոսել գարդանախշերի ընտրության մասին :Բացատրել և ցուցադրել գարդակարերի տեխնիկան` սլայդերի և անհատական մոտեցման միջոցով: Աշակերտներին հանձնարարվել գործվածքի վրա` քանոնի և մատիտի օգնությամբ գծել մի քանի ուղիղ գծեր ընտրել թելի գույնը և ասեղնագործել մի քանի գարդակար:  
3.Գործնական աշխատանք – աշակերտներին օգնել կատարել գարդակարերի մի քանի տեսակներ:

4.Ինքնուրույն գործնական աշխատանք - աշակերտները ընտրում են գործվածքը, Էսքիզը, թելերի գույները և աշխատում են ինքնուրույն, առանց ուսուցչի միջամտության:

5.Կշռադատման փուլ(5-7 թույն) - Այս փուլում ևս մեկ անգամ երեխաների հետ կվերհիշենք, թե ինչպես է իրականացվում գարդանախշերի փոխանցման գործընթացը, գարդակարերի ինչ տեսակներ սովորեցինք:

Ամփոփում(3 թույն)

- ուսուցանող գնահատում
- սխալների և դրանց պատճառների վերլուծություն, քննարկում
- հանձնարարել տանը ասեղնագործել պարզ էսքիզներ:



Հետազոտության ընթացքում հասկացա նաև, որ 6-րդ դասարանում յուրացրած 'Ասեղնագործություն' թեման, սովորողները արդեն կիրառում են 7-րդ դասարանում: Նրանք 'հագուստի պատրաստման տեխնոլոգիա' թեմայի ժամանակ եզրակարծ կարել են մանկական շապիկ և իրենց իսկ նախաձեռնությամբ ասեղնագործել են:





## Եզրակացություն

Կատարելով այս հետազոտական աշխատանքը կարող եմ հանգել հետևյալ եզրակացություններին.

1. Դասավանդման գործընթացը չի կարող բոլոր աշակերտների համար միատեսակ լինել, անհրաժեշտ է յուրաքանչյուրին ցուցաբերել անհատական մոտեցում՝ կախված իր հնարավորություններից:
2. 'Տեխնոլոգիա' առարկան լայն հնարավորություններ է ընձեռնում խթանելու սովորողների ինքնուրույնությունն ու ստեղծագործական ունակությունները: Դրան նպաստում են տեխնոլոգիայի գործնական պարապմունքները:
3. Դասավանդման ընթացքում հարկավոր է անընդհատ խրախուսել աշակերտի նույնիսկ ամենափոքր ձեռքբերումը: Դա կոգնորի նրան և խթան կհանդիսանա նոր ստեղծագործական աշխատանքների համար:
4. Աշակերտների մոտ ստեղծագործական ունակությունների, ինքնուրույնության և նախաձեռնության զարգացմանը կարելի է հասնել 'Տեխնոլոգիա' առարկայի շրջանակներում՝ ստեղծագործական նախագծերի օգնությամբ:
5. Սովորողները «Ասեղնագործություն» թեման ուսումնասիրելու ընթացքում որոշ չափով ճանաչեցին հայ մշակույթն ու մարդկային քաղաքակրթությունների մշակութային բաղադրիչները: Նրանք ձևավորում են սեփական նախասիրություններ ազգային և համաշխարհային մշակութային ժամանակշրջանների ուսումնասիրության ընթացքում և ի վիճակի են զարգացնել սեփական մշակութային ու գեղագիտական պատկերացումները՝ արժևորելով հոգևոր և նյութական ժառանգությունն ու մշակութային բազմազանությունը:
6. Արդյունավետ ուսուցում կազմակերպելու հիմնական խնդիրներից մեկն այն է, որ ուսումնական գործընթացում ակտիվ մասնակցություն ունենան բոլոր աշակերտները և ոչ թե նրանց մի մասը: Իսկ դա ինքնաբերաբար լինել չի կարող, և անհրաժեշտ է, որ ուսուցիչը դասավանդման ընթացքում ստեղծի համապատասխան իրադրություն և ապահովի անհրաժեշտ պայմաններ:
7. Անհրաժեշտ պայմաններից մեկը, թերևս առաջնայինը, այն է, որ ստեղծվեն այնպիսի դրական շարժառիթներ և բարենպաստ դրդապատճառներ, որոնք աշակերտներին կմղեն ուսումնական գործունեության: Իսկ այդ դրդապատճառները բացահայտելու համար պետք է օգտագործել թեմայի և յուրաքանչյուր դասի կրթական ներուժը:

## Գրականություն

1. «Հիմնական դպրոցի «Տեխնոլոգիա» առարկայի չափորոշիչ և օրինակելի ծրագիր» նախագիծի նմուշօրինակ, Երևան 2021
2. «Տեխնոլոգիա 6» դասագիրք, հեղ. Ս. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Ս. Աղաջանյան, Լ. Վերոյան, Երևան 2020
3. «V-VII դասարանների ուսուցչի մեթոդական ձեռնարկ» ,Ավետիսյան Ժ.,Երևան 2014
4. Искусство вышивания. Вышивка крестом возрождается, Кос
5. Шурьгина Л. Г. Организация самостоятельной работы учащихся на уроках технологии.
6. [elarning.kasa.am](http://elarning.kasa.am)
7. <https://cyberleninka.ru/article/n/razvitie-tvorcheskih-sposobnostey-uchaschihsya-na-urokah-tehnologii-1/pdf>
8. <https://gigabaza.ru/doc/63872-pall.html>